

Ասիական երկրների վարկային-ֆինանսական հատվածը

Կորպորատիվ հատվածի զարգացման հաջողությունները և բնակչության կենսամակարդակի բարձրացումը շուկայական մեխանիզմների ամրապնդման, ազատականացման և պետական կարգավորման հետ միասին նպաստում են բանկային ծառայությունների նկատմամբ պահանջարկի բարձրացմանը, ինչպես նաև ասիական երկրներում ֆինանսական հատվածի զարգացմանը:

Ասիան դարձել է համաշխարհային տնտեսության առաջատար մասնակիցներից մեկը ոչ միայն համաշխարհային արտադրությունում նրա ունեցած մասնաբաժնի, այլև գլոբալ տնտեսական և ֆինանսական տեմդենցների վրա նրա ունեցած ազդեցության տեսանկյունից: Վերջին տասնամյակում ասիական տարածաշրջանը, աշխարհում զարգանալով ամենաարագ տեմպերով, ապահովել է համաշխարհային համախառն արդյունքի գրեթե 40%-ը, ինչպես նաև համաշխարհային առևտրի 1/5-ը: Արագ տնտեսական աճի և կենսամակարդակի բարձրացման շնորհիվ ասիական երկրներին հաջողվեց եկամուտներում կրճատել տարբերությունը և բարելավել բնակչության (այն կազմում է երկրագնդի բնակչության կեսից ավելին) տնտեսական հեռանկարները: Տարածաշրջանում մեկ շնչին ընկնող եկամուտը տարեկան ավելանում էր մոտ 6%-ով:

Խթանելով ապրանքների և կապիտալի համաշխարհային շարժին՝ աճը ասիական երկրներում հանդես է գալիս որպես գլոբալ տնտեսության աճի հզոր շարժիչ, ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխման և անհաշվեկշռվածության վերացման գործիք:

Ասիական երկրների աճի շարժիչ ուժերը դարձան այնպիսի գործոններ, ինչպիսիք են մակրոէկոնոմիկայի և ֆինանսական հատվածի հիմքերի ամրապնդումը, տնտեսական կառուցվածքների վերափոխումը, բազմաքանակ և որակավորված աշխատուժի առկայությունն ու ճկուն տնտեսությունը: Ներկայումս, հիմնական խնդիրը կայանում է տարածաշրջանային ինտեգրման և համագործակցության արագացումը և խորացումը, քանի որ այն թույլ է տալիս ճիշտ հասկանալ և գնահատել շուկայական դինամիկան, ավելի ճիշտ կանխատեսել և կառավարել ռիսկերը՝ դրանով իսկ ապահովելով և տարածաշրջանում, և աշխարհում սպասվող ֆինանսական կայունությունը: Ֆինանսական ինտեգրումը ակտիվացնում է արտաքին առևտուրը, ներդրումների հոսքը, ինչպես նաև նպաստում է կապիտալի ավելի արդյունավետ տեղաբաշխմանը:

Տարածաշրջանային համագործակցություն

Վերջին տարիներին տարածաշրջանում ինտենսիվ ջանքեր են գործադրվում ֆինանսական հաստատությունների և շուկաների հսկման և վերահսկման գործառույթների արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ֆինանսական հատվածի օժանդակման համար տարածաշրջանային մեխանիզմների ստեղծման ուղղությամբ: Խոսքը վերաբերում է մասնավորապես՝ արժեթղթերի շուկայի զարգացման խթանիչների, ներքին ֆինանսական շուկաների ուժեղացման և դրանց մակրոէկոնոմիկական կառավարմանը, ինչպես նաև իսլամական բնակչության համար ֆինանսական ծառայությունների ընդլայնմանն ու փողերի լվացման դեմ պայքարին:

Ձեռնարկատիրական պոտենցիալի տեսանկյունից ասիական «երկիր-լիդերները» արդի աշխարհում համարվում են առավել հեռանկարային: Մալազիայի Կենտրոնական Բանկի նախագահը համարում է, որ գլոբալ տնտեսությունում ասիական երկրների պոտենցիալի լրիվ իրացման համար շրջադարձային նշանակություն ունեն ինտեգրումը և կոոպերացիան ինչպես տարածաշրջանի ներսի երկրների, այնպես էլ աշխարհի այլ պետությունների հետ: Նրա կարծիքով համագործակցության ուղղությունների ընտրության հարցում առաջնությունը պետք է տալ այն ոլորտներին, որոնցում երկրներն ունեն մեծ փորձ, կոմպետենտություն և գիտելիքներ: Կան ոլորտներ, որտեղ նախընտրելի է

զարգացնել տարածաշրջանային համագործակցությունը, և կան նաև ոլորտներ, որտեղ ասիական երկրների համար ավելի շահավետ է համագործակցել աշխարհի այլ երկրների հետ:

Հոնկոնգի դրամավարկային վարչության (ՀԴՎ) ղեկավարի կարծիքով ասիական երկրներում արժեթղթերի ներքին շուկայի զարգացման առավել արդյունավետ գործիքներ են հանդիսանում տարածաշրջանային համագործակցությունը և ազգային կառավարությունների համապատասխան քաղաքականությունը: Ինչ վերաբերում է տարածաշրջանային համագործակցությանը, ապա Արևելյան Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի կենտրոնական բանկերի (ԱԱԽՏԿԲ) ղեկավարների 2002 թ. կայացած խորհրդակցության ժամանակ ՀԴՎ առաջարկեց ստեղծել Արժեթղթերի ասիական հիմնադրամ (ԱԱՀ), որի նպատակն էր լինելու խորհրդակցության մասնակից անդամ-երկրների օտարերկրյա արժույթային պահուստների մի մասի ներդրումը ասիական արժեթղթերում:

2003 թ. հունիսին ԱԱԽՏԿԲ հիմնադրեց ABF1 հիմնադրամը, որը պետք է ներդրումներ կատարեր դոլարային արժեթղթերում՝ թողարկված 8 երկրների (Չինաստան, Հոնգ Կոնգ, Ինդոնեզիա, Հարաֆային Կորեա, Մալազիա, Ֆիլիպիններ, Սինգապուր, Թայլանդ) էմիտենտների կողմից: Այդ հիմնադրամի ստեղծումը թեպետ և ոչ մեծ, բայց կարևոր քայլ էր 11 ասիական երկրների համագործակցության համար՝ ուղղված արժեթղթերի տարածաշրջանային և ազգային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը:

Հաջորդ առավել կարևոր քայլն եղավ ABF2 նախագծի հիմնադրումը, որի նպատակն էր ներդրումների կատարումը ասիական երկրների ազգային արժույթներով արտահայտված արժեթղթերում: Տվյալ հայեցակարգի շրջանակներում 2006 թ-ին ստեղծվեցին Pan-Asia Bond Index Fund (PAIF) և 8 հիմնադրամներ, որոնցից յուրաքանչյուրը ներդրումներ էր իրականացնելու որևէ տեսակի արժեթղթերում: 2006 թ-ի վերջում ABF2 նախագծի մեջ մտնող բոլոր հիմնադրամները ցույց տվեցին ակտիվների ռեկորդային աճ՝ 26%-138%՝ չնայած ԱՄՆ-ում տոկոսադրույքների բարձրացմանն ու դրանց դինամիկայի հեռանկարի անորոշությանը:

Չնայած ABF-ի նախաձեռնությունները ընդլայնեցին ասիական երկրների արժեթղթերի շուկաներում ներդրումների հոսքը՝ այնուամենայնիվ, առկա էին խնդիրներ, որոնց լուծման համար պահանջվում էր տեղական իշխանությունների միջամտությունն ու աջակցությունը՝ հատկապես կապված ֆինանսական ինֆրակառուցվածքների ոչ բավարար զարգացման հետ:

Հոնկոնգը՝ որպես համաշխարհային ֆինանսական կենտրոն

Տարածաշրջանի ֆինանսական պոտենցիալի զարգացման տեսանկյունից առանձնահատուկ ուշադրություն է ներկայացնում Չինաստանը, որտեղ ձևավորվում է ձեռներեցների մի նոր սերունդ, որը ձգտում է գտնել Ֆինանսավորման ոչ ավանդական ուղիներ և անհատական ակտիվների կառավարման նոր մեթոդներ: Այստեղ գոյություն ունի մի հսկա շուկա, որի մեծ մասը դեռևս յուրացված չէ ֆինանսական ծառայություններ մատուցող միջազգային պրովայդերների համար: Առաջին հերթին խոսքը վերաբերում է Հոնկոնգի շուկային, որը դարձավ անվիճելի գլոբալ ֆինանսական կենտրոն: Գլոբալ ֆինանսական կենտրոնների ինդեքսի համաձայն (Global Financial Centers Index-GFCI)՝ Հոնկոնգը մրցունակությամբ զբաղեցնում է 3-րդ տեղը (Լոնդոնից և Նյու Յորքից հետո):

Հոնկոնգի բանկային հատվածը բնութագրվում է օտարերկրյա կապիտալի ներգրավման բարձր մակարդակով: Աշխարհի 100 առաջատար բանկերից 75%-ը Հոնկոնգում ունի գրասենյակներ: Բանկային հատվածի կառուցվածքում առանձնացվում են հաստատությունների 3 խումբ՝ բանկեր, որոնք ունեն լիցենզիաներ, բանկեր՝ սահմանափակ լիցենզիաներով և դեպոզիտ ընդունող կազմակերպություններ: Արևմտյան ֆինանսիստներին գրավում է պարտքային գործիքների շուկայի ընդարձակումը և

հասունությունը: Հոնկոնգը Ասիայում առաջին իրավագործ էր, որտեղ թույլատրվում էր հատավաճառ ներդրողներին վաճառել հեջային ֆոնդերի մասնաբաժինները:

Արժույթների փոխանակման ծավալներով Հոնկոնգը աշխարհում զբաղեցնում է 6-րդ տեղը: Չինական կազմակերպությունների համար այն հանդիսանում է արտասահմանյան կապիտալի գլխավոր աղբյուր, և նա առաջինը սկսեց մատուցել բանկային ծառայություններ չինական ժենմինբի արժույթով (renminbi banking services):

Հոնկոնգը գլխավորում է Ասիայում՝ որպես ներգրավված միջոցների կառավարման կենտրոն (fund management). համապատասխան կազմակերպությունների կառավարման ներքո գտնվում է մոտ 600 մլրդ. դոլար գումարի կապիտալ: Կապիտալը կառավարող և ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեությունը ամբողջությամբ կարգավորվում է անկախ՝ ոչ կառավարական գերատեսչության՝ Արժեթղթերի և ֆյուչերսների հանձնաժողովի կողմից: Օֆշորային ֆոնդերը ազատված են շահութահարկից, իսկ քաղաքում չի գործում գույքահարկը:

Ասիայի խոշորագույն կապիտալի շուկան գտնվում է Հոնկոնգում. ֆոնդային շուկայի կապիտալացման ծավալով քաղաքը երկրորդն է Ասիայում: Այստեղ գոյություն ունեն Euroclear և Cedel համակարգերի միջոցով քլիրինգի և հաշվարկների ժամանակակից հնարավորություններ:

Ձեռներեցության անվտանգության և թափանցիկության, ինչպես նաև ֆինանսական ծառայությունների հատվածի կարգավորման լավ համակարգի շնորհիվ արևմտյան կազմակերպությունների համար Հոնկոնգն առավել գրավիչ է: Հոնկոնգն արտերկրյա մատակարարներին տրամադրում է այնպիսի առավելություններ, ինչպիսիք են բիզնեսի համար շահեկան ռազմավարական աշխարհագրական դիրքը, որակավորված և դինամիկ աշխատուժը և այլն: Հոնկոնգին հաջողվել է պետական քաղաքականության պայմաններում հասնել բիզնեսի թափանցիկության, անվտանգության և կարգավորման միջև հավասարակշռվածության: Արժեթղթերի և ֆյուչերսների հանձնաժողովը (Securities and Futures Commission) և ՀԴՎ-ն ստեղծել են այնպիսի պայմաններ, որոնք անհրաժեշտ են քաղաքի՝ որպես համաաշխարհային ֆինանսական կենտրոնի զարգացման և աջակցման համար: Մասնավորապես այդ պայմաններից են՝ հարկային ցածր բեռը և մայրցամաքային Չինաստանի պետական կառավարման մարմինների ազդեցության ոլորտից դուրս գտնվող կապիտալից, շահաբաժիններից և գույքից ստացված եկամուտների հարկադրման համակարգի կանխատեսելի լինելը, ինչպես նաև իրավական համակարգի թափանցիկությունը և անկախությունը:

Բացի դրանից, Հոնկոնգը տիրապետում է տեղեկատվության ազատության և բավականին բարդ և վստահելի հաղորդակցման ցանցի համադրելիության հազվագյուտ առավելությանը: Աշխարհագրական տեսանկյունից Հոնկոնգը շրջապատված է այնպիսի երկրներով, որոնք ունեն պոտենցիալ խոշոր շուկաներ: Հոնկոնգում հիմնավորված կազմակերպությունները ստանում են մայրցամաքային Չինաստանի, Սինգապուրի, Մալազիայի, Ֆիլիպինների և ասիական այլ երկրների մուտքի թույլտվություն: Մայրցամաքային Չինաստանը հանդիսանում է Հոնգկոնգի խոշորագույն բիզնես-գործընկերը, որի միջոցով մայրցամաքային Չինաստան է մտնում բոլոր ներդրումների մոտ 40%-ը:

ՀԴՎ-ի ղեկավար Ջ. Յամի կարծիքով 1997-1998 թթ. ֆինանսական ճգնաժամն ասիական տարածաշրջանում պետք է դառնա բաժնետոմսերի ուժեղ և իրացվելի շուկայի զարգացման կարևոր գործոն: Տվյալ շուկան կորպորատիվ հատվածին կօգնի նվազեցնել կախվածությունը բանկային կարճաժամկետ վարկավորումից: Միաժամանակ նա գրավում է ասիական երկրների բնակիչների ներքին խնայողությունները, որոնք ունեն նշանակալից ծավալներ և սովորաբար օգտագործվում են զարգացած արդյունաբերական երկրների ակտիվներում ներդրումների համար:

ՀԴՎ-ի շնորհիվ Հոնկոնգում կուտակվել է ներքին պարտքային շուկայի և ֆինանսական ենթակառուցվածքների զարգացման դրական փորձ: Մինչև 1990 թ. Հոնկոնգում գոյություն չուներ պարտքային արժեթղթերի շուկա: Նրա զարգացման համար ՀԴՎ-ն 1990 թ. ընդունեց կարճաժամկետ (Exchange Fund Bills) և միջին ժամկետային

(Exchange Funds Notes) պետական արժեթղթերի (վեքսելների) թողարկման ծրագիր (Exchange fund bills and notes programme)՝ 3 ամսից մինչև 10 տարի ժամկետով:

Ծրագիրը եղավ շատ հաջող, քանի որ այն թույլ տվեց մինչև 10 տարի ընդարձակել Հոնկոնգի դոլարի եկամտի կորը, որը ծառայում է որպես էտալոն պարտքային գործիքների համար: Բացի դրանից ՀԴՎ-ն կազմակերպեց նաև այսպես կոչված «մարքեթ մեյքինգի» (market making) համակարգ, որը պարտավորեցնում էր մարքեթմեյքերներին նշանակել կրկնակի գին: Ներկայումս Հոնկոնգի 26 բանկեր հաստատված են՝ որպես մարքեթմեյքերներ, որոնք իրավունք ունեն պարբերաբար անցկացնել պետական մուրհակների վաճառք: Բոլոր այս քայլերը նպաստեցին լիկվիդայնության և պետական պարտատոմսերի եկամտաբերության հանդեպ վստահության բարձրացմանը: Այդուհանդերձ, արտասահմանյան թողարկողները պահպանում են ներքին շուկայում՝ որպես վարկառուների, առաջատար դիրքեր. 2006 թ. սեպտեմբերի վերջին նրանց չմարած պարտքերի ծավալը հասել էր 42 մլրդ. դոլարի, մինչդեռ 2007 թ. վերջին այն կազմում էր 1,3 մլրդ. դոլար:

ՀԴՎ-ն գործունեության հաջող կարևոր ուղվածությունն արժեթղթերի շուկայի արդյունավետ ենթակառուցվածքների ստեղծումն է: Վերջինիս նպատակն է Հոնկոնգը վերածել վճարումների և հաշվարկների տարածաշրջանային կենտրոնի, որտեղ իրականացվում են տարբեր արժույթներով տարբեր գործարքներ՝ հիմքում ունենալով վճարումների և հաշվարկների արդյունավետ և անվտանգ համակարգեր:

Բանկային հատված

Ասիական երկրների տնտեսությունների աճն անդրադառնում է բանկային համակարգի զարգացման վրա, այդ թվում ֆինանսավարկային հաստատությունների սեփական կապիտալի, համախառն ակտիվների և շահույթի չափերի վրա, որը նպաստում է փոխառու միջոցների նկատմամբ կազմակերպությունների և անհատ սպառողների կողմից պահանջարկի բարձրացմանը:

Չինաստանի ամենախոշոր պետական բանկերից են՝ Industrial and Commercial Bank of China (ICBC)(սեփական կապիտալը կազմում է 59,2 մլրդ. դոլար), Bank of China (52,5 մլրդ. դոլար) և China Construction Bank (42,3 մլրդ.), որոնք եականորեն շրջանցել են իրենց ասիական մրցակիցներից: Աշխարհի 1000 առաջատար բանկերի ցանկում, որտեղ ներառված են չինական 31 բանկեր, ICBC և Bank of China զբաղեցրել են համապատասխանաբար 7-րդ և 9-րդ տեղերը:

Ասիայում Կորեայի բանկերն իրենց հզորությամբ երկրորդ տեղում են: Ասիական 25 առաջատար բանկերի ցուցակում ներառված են 7 կորեական բանկեր: Այս ցուցակի մեջ են ներառվել են նաև Սինգապուրի և Թայվանի երեք բանկեր: Ուշագրավ է այն, որ Հնդկաստանի 27 բանկերից (որտեղ բնակվում է աշխարհի բնակչության 18%-ը և արտադրվում է համաշխարհային արտադրանքի 2%-ը) 1000 առաջատար բանկերի ցանկում թվարկված բանկերից 25 ասիական առաջատար բանկերի ցանկում տեղ են գրավել միայն երկու բանկեր՝ State Bank of India (9 981 մլն. դոլար) և ICICI Bank (4 293 մլն. դոլար): Ընդ որում, իրենց չափերով այս բանկերը զգալիորեն տարբերվում են ասիական առաջատար բանկերից: Այնուամենայնիվ, Հնդկաստանը ՀՆԱ-ի ցուցանիշով աշխարհում զբաղեցնելով 13-րդ տեղը, ունի համեմատաբար ոչ մեծ բանկային հաստատություններ:

Կապիտալի և ակտիվների հարաբերակցության աճի տեմպերով (tier 1 capital/ assets ratio), ինչպես նաև եկամտաբերության ցուցանիշով չինական բանկերը զիջում են ասիական այլ երկրների բանկերին:

Ասիայի երկրների բանկերի գործունեության ցուցանիշները

Երկրներ	Կապիտալի և սեփական ակտիվների հարաբերակցությունը %		Շահույթի (մինչև հարկում) և կապիտալի հարաբերակցությունը %	
	2005 թ.	2006 թ.	2005 թ.	2006 թ.
Չինաստան	5,24	5,74	22,48	18,28
Չինաստան	3,83	5,64	18,46	17,66
Սինգապուր	7,19	7,26	16,52	19,91
Թայվան	6,45	6,29	3,58	0,11
Հարավային Կորեա	5,33	5,24	23,82	20,72

Բնակարանային վարկավորում

Վարկային հաստատությունների և արժեթղթերի շուկայի հետ մեկտեղ Ասիայի երկրների ներքին ֆինանսական շուկայի կարևոր բաղկացուցիչ մաս է հանդիսանում բնակարանային վարկավորումը (housing finance): Նրա զարգացումը վերջին ժամանակներում դարձել է դիտարկվող երկրների պետական քաղաքականության առաջնահերթություններից մեկը, այնպես ինչպես բնակարանային հատվածը հանդիսանում է տնտեսական աճի հզոր գործոն և սոցիալ քաղաքականության կարևոր տարր, որն ուղղված է բնակչությանը բնակարաններով ապահովելուն:

1997-1998 թթ. ֆինանսական ճգնաժամից հետո տարածաշրջանում նկատվում է բնակարանային հիփոթեքային շուկայի արագ վերականգնում, որն աջակցվում է բանկային տարբեր գործարքների ընդարձակմամբ, լիկվիդայնության բարձրացմամբ և վարկերի ցածր տոկոսադրույքներով: Տարածաշրջանում առաջնային հիփոթեքային շուկայի աճին նպաստում է մակրոտնտեսական աճը, ֆինանսական հատվածի ազատականացումը, բանկերի մանրածախ գործունեության ընդարձակումը և ռիսկերի կառավարման ոլորտի կարգավորման կատարելագործումը: Հարավային Կորիայում հիփոթեքային շուկայի արագ աճին նպաստեց բանկային ընկերությունների ռազմավարական լուծումները՝ կապված մանրածախ վարկային պրոդուկտների տեսքով դրանց տեղաբաշխման հետ:

Մինչև 2005 թ. Ասիայի հարավ-արևելյան երկրներում հիմնականում պահպանվում էր հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների ցածր մակարդակ (5%-8%), որը հասանելի էր միջին եկամուտ ունեցող ընտանիքների համար: 2005 թ. սկսած հիփոթեքային վարկերի տոկոսադրույքները սկսեցին աճել տարեկան 1-1.5%-ով (օր. Ինդոնեզիայում այն հասել է 17%-ի): Փորձագետների գնահատմամբ տոկոսադրույքների հետագա աճը կարգելակի հիփոթեքային շուկայի աճին, սակայն առաջ չի բերի նոր ֆինանսական ճգնաժամ, որը համեմատելի լինի 1997-1998 թթ ճգնաժամի չափերի հետ: Հիփոթեքային վարկավորման ժամկետները կարող են ավելանալ մինչև 20-ից 30 տարի հակառակ ներկայիս 10-ից 15 տարվա փոխարեն:

Ասիայի հարավ-արևելյան երկրների հիփոթեքային շուկաներում գերակշռում է լողացող տոկոսադրույքով հիփոթեքը, որը չափազանց գրավիչ է տոկոսադրույքների անկման շրջանում, սակայն երկարաժամկետում կապված է նշանակալից ռիսկերի հետ: Ներկայումս ֆիքսված տոկոսադրույքներով վարկերի տեղաբաշխումը պետական ֆինանսական հաստատությունների համար հանդիսանում է գերակա նպատակ, որի իրացումը պետք է նվազեցնի ֆինանսական համակարգի խոցելիությունը և բարձրացնի հիփոթեքի հասանելիությունը ցածր եկամուտ ունեցող ընտանիքների համար: Սակայն, այդպիսի վարկերի օգտագործումն ընդարձակելու համար անհրաժեշտ է որոշակի հիմքեր, այդ թվում նաև մակրոտնտեսական կայունություն, երկարաժամկետ ինստիտուցիոնալ ներդրողներ, վարկերի ֆինանսավորման ճկուն կառուցվածք: Սովորաբար թույլ զարգացած երկրներում ֆիքսված տոկոսադրույքներով վարկերը «ճոխության առարկա են», որը հասանելի չէ բնակչության լայն զանգվածների համար:

Հիփոթեքային վարկավորման աջակցման համար օգտագործվում է հիփոթեքային ապահովագրության ոլորտի նախաձեռնությունը վարկառուի սնանկացման դեպքում, որում սովորաբար ֆինանսական մասնակցություն է ունենում պետական հատվածը: Օրինակ՝ ՀԴՎ-ն 1999 թ. սկսած մշտապես ընդլայնում է հիփոթեքային ապահովագրության իր ծրագիրը:

Երկրորդային հիփոթեքային շուկան դիտարկվող երկրներում հիմնականում թերի զարգացած է: Այդ նպատակով անհրաժեշտ է ուժեղացնել աշխատանքները հիփոթեքի արժեթղթավորումը զարգացնելու ուղղությամբ: Սակայն դա միակ ճանապարհը չէ, և կարող են օգտագործվել մասնավոր հիփոթեքային արժեթղթերի տարբեր տեսակներ: Հնարավոր լուծումների շարքում են արժեթղթավորված ակտիվների և հիփոթեքային արժեթղթերի լիկվիդայնության բարձրացման մեխանիզմներում ներդրումների կատարումը: Այդպիսի կազմակերպությունները հաջողությամբ գործում են Մալազիայում (Cagamas Berhad): Cagamas Berhad-ը ստեղծվել է 1987 թ.՝ որպես մասնավոր ընկերություն, որը մասնագիտացած է բնակարանային վարկեր տրամադրող հաստատություններին օգնություն ցույց տալու գործում, որի նպատակն է վարկավորման ծավալների ավելացումը և նրանց ռիսկերի կառավարումը, ինչպես նաև արժեթղթերի մասնավոր շուկայի զարգացումը: Cagamas Berhad-ը ներկայումս հանդիսանում է մասնավոր արժեթղթերի առաջատար թողարկողը (2005 թ. շրջանառության մեջ գտնվող մասնավոր արժեթղթերի 14 %-ը): Նա 2004 թ-ից զբաղվում է կառավարության կողմից պետական ծառայողներին տրամադրված բնակարանային վարկերի արժեթղթավորմամբ: